

Մ. ԼՍԿԻՃԻՅԱՆ

ԱՌԱՋԻՆ ԱՆԳԱՍ ԸՆՏՐՈՂՆԵՐՍ

Ձմեռային երեկո է։ Թիթեռնիկների նման ձյան ճերմակ փաթիլները պտույտ տալով օդում՝ իջնում են ներքև։

Լուսավոր ու բարեհաճար սենյակում նստած զրույց եմ անում հայրենադարձ ընկերոջս՝ հաշատուր Չորեքչյանի հետ։

Խ. Չորեքչյանը մոտ 18 տարեկան խանդավառ երիտասարդ է։ Չնայած դեռահաս տարիքին, նա արդեն սովորում է Մ. Նալբանդյանի անվան Պետական Մանկավարժական ինստիտուտում։ Իր ուժերը փորձում է պոեզիայի մեջ։ Եվ, պետք է ասել, որ նրան հաջողվում է բավականին գեղեցիկ ու ճշմարտացի վերարտադրել մեր երջանիկ կյանքի հարուստ առօրյան։

Մենք խոսում ենք իրար հետ սովետական հարազատ երկրի կառավարման գերագույն օրգանի՝ ՍՍՌՄ Գերագույն Սովետի ընտրությունների մասին։

— Ես լցված եմ անհուն բերկրանքով, — ասում է զրուցակիցս, — որովհետև առաջին անգամ եմ մասնակցելու ընտրություններին։ Ես ծնվել եմ արտասահմանում։ Իմ մանկությունն անցել է տիտուր և անգույն։ Օտար և հեռավոր ափերից վերադառնալով Հայրենիք՝ Սովետական Հայաստան, այժմ միայն, աշխարհի ամենադժոխքալից և անապահով Ստալինյան Կոնստիտուցիայի կենարար արևի ներքո, ապրում եմ իմ կյանքի վերածնունդը և համոզված քայլում դեպի իմ շողջողուն ապագան։ Բուռն հրճվանքով, սովետական քաղաքացու վեհ գիտակցությամբ, ես իմ ձայնը կտամ խաղաղության, երջանկության, դեմոկրատիայի և ժողովուրդների համերաշխության մեծահամաճար դրոշակակրին՝ համաժողովրդական թեկնածու մեծ Ստալինին, և մեր երկրի լավագույն

գավաթներին ու դոստրերին։ Ես խորապես գիտակցում եմ, որ ձայն տալով կոմունիստների և անապարտիկանների ընդդիմեկնածուին, ես դրանով իմ լուսավայլ գալիքի համար եմ քվեարկում։

— Ես էլ եմ ընտրելու առաջին անգամ, — ասացի ես, — երբ նա վերջացրեց իր ասնլիքը, — այդ ինձ նույնպես հրճվանք է պատճառում և ես նույնպես հուզմունքով եմ սպասում այդ օրվան։ Եվ մենք՝ երկու հայրենադարձ երիտասարդներս, ողջունում ենք միմյանց այդ առթիվ։ Մենք երկուսս էլ նույն զգացմունքով ենք համակված։ Զե՛ որ բախտակից մարդիկ ենք. միասին ենք տառապել օտար հորիզոններում, ճաշակել խորթություն, դառնություն, տեսել ենք մարդու ստրկացումը մարդու կողմից, տեսել ենք ազգի, սեռի, դավանանքի, սոցիալական դրության խտրություն և այլն, իսկ այժմ, որպես իրավահավասար քաղաքացիներ, ընտրելու ենք մեր երկրի կառավարողներին։

— Անհամբեր սպասում եմ, հաշատուր, մարտի 12-ին, պատմական այդ օրվան, երբ ընտրական թեղթիկները ձեռքերիս պիտի մոտենանք քվեատուփին, ասում եմ ես։ Մի ամիս է մնում մինչև ընտրությունները։

Ուշ երեկո է։ Ռադիոյից լսվում են Սովետական Հայաստանի հիմնի խրոխտ հրնշյունները։

Որքան լավ է ապրել ու աշխատել Սովետական Հայրենիքում, ուր մարդն ազատ է, հարգի ու երջանիկ։

12 Փետրվարի, 1950 թ.

Լենինական